ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ՆԱՐԻՆԵ ՄԱՏԻՆՅԱՆ
Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան
Մանկ. գիտ. թեկնածու
Էլհասցե՝ nmatinyan173@mail.ru

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՆՈՐ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ամփոփում

Հոդվածը նվիրված է հանրակրթական դպրոցի կառավարման գործընթացի թվայնացման խնդիրների քննարկմանը: Մեր ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ դպրոցի կառավարման գործընթացի թվայնացումը ենթադրում է ընթացակարգային և կառավարչական գործառույթների, սկզբունքների, նպատակների, դրանց իրականացման միջոցների հիմնարար փոփոխություններ, անհրաժեշտ նյութատեխնիկական և այլ ռեսուրսների առկայություն: Մինչդեռ, մենք կարծում ենք, որ կրթության թվայնացումը, այդ թվում դրա կառավարման գործընթացը գլոբալ խնդիր է, որի իրականացմանը այսօր պետք է պատրաստ լինեն հանրապետության կրթական բոլոր հաստատությունները:

Ասվածը փաստում է, որ հանրակրթական դպրոցների կառավարման գործընթացի թվայնացման նպատակին պետք է հասնել որոշակի ծրագրավորված փուլերով՝ հաշվի առնելով բոլոր հնարավորությունները՝ կառավարչական մեթոդների, գործառույթների և սկզբունքների համապատասխան հակազմի ձևավորման և կիրառման հիման վրա:

Բանալի բառեր և արտահայտություններ. հանրակրթական դպրոց, կրթության թվայնացում, թվային մտածողություն,կառավարում, տեխնոլոգիա, տեղեկատվական դաշտ, ուսումնական գործընթաց, մեթոդները, համակարգ, մոդելավորում, սովորող, գնահատում:

Ներածություն

Արդի ժամանակաշրջանում գիտական գրականության մեջ շրջանառվում են կրթության թվայնացման, կրթական հաստատությունների կառավարման թվայնացման վերաբերյալ հայեցակարգային տարբեր մոտեցումներ, որոնք երբեմն խիստ հակասական են: Ընդ որում դրանցից շատերում հաշվառված չեն թվայնացման տեխնիկական և տեխնոլոգիական

հիմքերի համապատասխանությունը կրթական հաստատությունների իրական ռեսուրսային, հնարավորություններին և կադրերի մասնագիտական պատրաստության տեխնոլոգիական մակարդակին:

Այս տեսանկյունից մենք համամիտ ենք Բ.Ե.Ստարիչենկոյի այն պնդման հետ, որ «կրթության թվայնացում» հասկացությունն այսօր մեկնաբանվում է որպես ավանդական կրթությունից անցում թվային կրթության: Կրթության թվայնացման արդիականությունը ներկա ժամանակում անմիջականորեն կապվում է թվային տնտեսության կադրերի պահանջարկի հետ, որոնք պատրաստված պետք է լինեն նման գործունեության գաղափարախոսության և տեխնոլոգիայի շրջանակներում[1]:

Իհարկե, անառարկելի է, որ հանրակրթական դպրոցի ենթահամակարգերի արդյունավետ կառավարումը ենթադրում է տեխնոլոգիապես հագեցած թվային կրթամշակութային միջավայրի ստեղծում, որը կապահովի սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների զարգացման բարձր մակարդակը, մասնագիտական որոշակի կարողունակության ձևավորման գործնական ուղղվածությունը, ուսուցչի թվային գրագիտության կատարելագործումը, ուսումնամեթոդական կայքերի լիարժեք օգտագուծումը:

Այն միաժամանակ կհեշտացնի դպրոցի կառավարման սուբյեկտների կանխատեսման, նախագծման, հայտորոշման, պլանավորման, ղեկավարման, կազմակերպման գործառույթների իրականացումը: Սակայն դրա համար անհրաժեշտ են համապատասխան նյութատեխնիկական պայմաններ մեծ ներդրումներ: Ուստի կարծում ենք, որ հանրակրթական դպրոցի կառավարման գործընթացի աստիճանական թվայնացումը չպետք է կրի տարրերային բնույթ, այլ պետք իրականացվի ծրագրավորված ալգորիթմով, աստիճանական փուլերով: Առաջին հերթին արդյունավետ կառավարման համար հանրակրթական դպրոցի արդյունավետ կառավարման համար պետք է դպրոցը ապահովված լինի նյութատեխնիկական-տեխնոլոգիական բազան, որի արդյունքում միայն կարող է ստեղծվել անհրաժեշտ թվային կրթական միջավայր և մանկավարժական կադրերի մեդիագրագիտության բարձր մակարդակ, կմշակվեն նաև վերահսկիչ մեխանիզմներ և գործիքակազմ: Ուստի նկատի ունենալով այն կարևոր հանգամանքը, որ կառավարման տեխնոլոգիաները, այդ թվում թվային տեխնոլոգիան, կառավարման սուբյեկտների միջև փոխազդեցության

[1] Стариченко Б. Е. Цифровизация образования: иллюзии и ожидания.- педагогическое образование в россии. 2020. № 3. с. 50.

ապահովման, որոշակի գործառույթների իրականացման նպատակների, միջոցների, մեթոդների և ձևերի ամբողջությունն են՝ սույն հոդվածում հեղինակը նպատակադիր է եղել՝

- բացահայտել հանրակրթական դպրոցի կառավարման գործընթացի աստիճանական թվայնացման գործում դրանց դերն ու նշանակությունը՝ շեշտադրելով այդ գործընթացի զարգացման տրամաբանությունը և դրա օրինաչափ դրսևորումների առանձնահատկությունները,
- առաջարկել հանրակրթական դպրոցի կառավարման գործընթացի աստիճանական թվայնացմանն անցնելու մեթոդներ, գործառույթներ և սկզբունքներ:

Մեթոդաբանությունը

Թեմայի ուսումնասիրության ընթացքում կիրառել ենք մանկավարժական հետազոտության մի շարք մեթոդներ՝ քննական, վերլուծական, համադրական, դիտման, համակարգման, ընդհանրացման: Որպես հոդվածի մեթոդաբանական հիմք օգտվել ենք հիմնախնդրի վերաբերյալ մանկավարժական հայեցակարգերից, մեթոդաբանական և գիտա-մեթոդական տարբեր մոտեցումներից:

***

Համաշխարհային կրթական տարածքում առկա տեղեկատվական տեխնոլոգիական զարգացումները, կրթության թվային վերափոխման մարտահրավերները և կրթության նպատակների արագընթաց փոխոխությունները իրենց ազդեցություն են թողել նաև ՀՀ կրթական համակարգի կառավարչական գործընթացների վրա[2]: Այս համատեքստում իրականացվում են «Փոխակերպման միջոցառումների մի շարք մանկավարժական գործընթացներ, որոնք հիմնված են տեղեկատվական արտադրանքների, գործիքների, տեխնոլոգիաների ուսուցման և կրթության մեջ ներդրման վրա»[3]: Ժամանակակից տեխնոլոգիական ձեռքբերումները և մանկավարժական գործընթացի ամբողջական թվայնացման միտումները ենթադրում են նաև կրթական հաստատության կառավարման գործընթացի թվայնացում, որն իր հետ բերում է նաև կրթության մեթոդաբանության և

[2] ՀՀ օրենքը հանրակրթության մասին, Ե., 2009 :

[3] Технология управления образовательным процессом в системе непрерывного образования. А. Н. Рыблова. Изд. центр «Наука», 2009г.

պրակտիկայի կազմակերպման նոր միջոցների, տեխնոլոգիաների, մեթոդների, գործառույթների, սկզբունքների փոփոխություն:

Ըստ Ի.Վ, Ռոբերտի «ուղիղ (նեղ)իմաստով «թվայնացում» հասկացությունը գործունեության ոլորտը (կրթություն, դպրոց, տնտեսագիտություն) կամ գիտություն (դիդակտիկա, մանկավարժություն) նշանակող հասկացության հետ համատեղել սխալ է և նույնիսկ անիմաստ[4]: Իսկ Բ.Ե, Ստարիչենկոյի կարծիքով «Ռադիոտեխնիկայի և համակարգչային գիտության տեսանկյունից «թվայնացում» (կամ թվայնացում) նշանակում է տեղեկատվության փոխակերպում ներկայացման անալոգային ձևից դիսկրետի: Իր հերթին, դիսկրետ ձևը միշտ կարող է առանց տեղեկատվության կորստի փոխակերպվել երկուական այբուբենի (նշաններ «0» և «1»), որն օգտագործվում է համակարգչում ցանկացած տվյալ ներկայացնելու համար՝ տեքստեր, թվեր, գրաֆիկա, ձայն, տրամաբանական արժեքներ: Այսինքն՝ «թվային»-ը տեղեկատվության հատկանիշն է, բայց ոչ դրա օգտագործման ոլորտը»[5]:

Մեր գիտական մոտեցումն այս բնութագրումների վերաբերյալ այն է, որ կրթության թվայնացումը գործընթաց է և մենք ցանկանանք, թե չցանկանանք տեղեկատվական-թվային տեխնոլոգիաների բուռն ներթափանցումը հասարակական կյանքի բոլոր ոլորտները ինքնին պահանջում են կրթական համակարգի թվային փոխակերպում, որը պետք է կրի համակարգային և ծրագրային բնույթ:

Այսօր արդեն ժամանակակից ուսուցման տեխնոլոգիաները՝ այդ թվում նաև թվայինը, դարձել է հանրակրթական դպրոցի բոլոր ենթահամակարգերի կառավարման գործընթացի անբաժանելի մասը՝ ապահովելով դրանց տեխնոլոգիական առաջընթացը: Այս համատեքստում անառարկելի է, որ համացանցը, ուսումնական այլընտրանքային ծրագրերն ու կայքերը դարձել են սովորողների ինքնուրույն գիտելիքների յուրացմանը, թվային մտածողության, գրագիտության, էլեկտրոնային կրթական ռեսուրսներից օգտվելու հմտությունների զարգացմանը և ուսուցման գործընթացի կառավարման արդյունավետությանը նպաստող անփոխարինելի միջոցներ:

---

[4] Роберт, И. В. Развитие понятийного аппарата педагогики: цифровые информационные технологии образования / И. В. Роберт // Педагогическая информатика. – 2019. – № 1. с. 117.

[5] Стариченко Б. Е. Цифровизация образования: иллюзии и ожидания.- педагогическое образование в россии. 2020. № 3. с. 50.

Բնականաբար, այս պարագայում կփոխվեն հանրակրթական դպրոցի կառավարման նպատակները, տեխնոլոգիաներն ու գործառույթները:

Մանկավարժական գրականության մեջ առկա են կառավարման տեխնոլոգիաները դասակարգման մի շարք տարբերակներ,

- ըստ առանձնահատկությունների,
- ըստ նպատակի,
- ըստ արտաքին տեսքի,
- ըստ միջոցառումների կազմակերպման բնույթի,
- ըստ կիրառման մասշտաբի,
- վերահսկողության տեխնոլոգիաների,
- ըստ գիտելիքի կառավարման ռազմավարությունների[6]:

Իհարկե, այս թվարկումից դուրս է մնացել թվային տեխնոլոգիան, որը կառավարչական գործառույթների՝ հայտորոշման, պլանավորման, կազմակերպման, ղեկավարման, վերահսկման, գնահատման, ռեֆլեքսիայի արդյունավետ իրականացման լավագույն մեխանիզմներից մեկն է:

Հիմք ունենալով վերը նշված դասակարգումը՝ մենք առանձնացրել ենք հանրակրթական դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացի կառավարման հետևյալ տեխնոլոգիաները.

- ուսուցչի խորհրդատվական և աջակցող գործունեության իրականացման տեխնոլոգիաներ,
- սովորողների ուսումնական գործունեության մոդելավորման տեխնոլոգիաներ,
- սովորողների ինքնուրուն գիտելիքների ձեռք բերման, պահեստավորման, փոխանցման, թվային մտածողության զարգացման տեխնոլոգիաներ,
- սովորողների մնացորդային գիտելիքների պահպանման և ստուգման տեխնոլոգիաներ,
- ուսուցիչների հետազոտական որոնողական, գործունեության կազմակերպման և հետազոտական կարողությունների զարգացման տեխնոլոգիաներ,
- դպրոցի զարգացման կառավարման և նորարարական գործընթացների շարունակականության ապահովման տեխնոլոգիաներ:

[6] Базаров Т.Ю. Управление персоналом : учебник для студ. учреждений сред. проф. образования / Т.Ю.Базаров. — 8-е изд., стер. — М. : Издательский центр «Академия», 2010. с. 220.

Իհարկե, թվարկածով չեն սահմանափակվում դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացի կառավարման նշված տեխնոլոգիաները, քանի որ Հանրակրթության մասին ՀՀ օրենքը կառավարման սուբյեկտներին լիովին ազատ գործելու, կառավարչական միջոցները, մեթոդներն ու տեխնոլոգիաները ինքնուրույն ընտրելու հնարավորություն է ընձեռում:

Այս տեսանկյունից կարևորվում է ուսուցիչների պատրաստակամությունը է ուսուցման գործընթացում թվային տեխնոլոգիաների կոմպետենտ և արդյունավետ կիրառման համար՝ ոչ միայն տեղեկատվության փոխանցման առումով, այլև դրա մշակման, պահպանման, յուրացման և օգտագործման, ինչպես նաև ուսումնական գործընթացի տեղեկատվական անվտանգության ապահովման առումով:,

Բնականաբար, թվային տեխնոլոգիայի աննախադեպ կիրառումը անխուսափելիորեն հանգեցնում են հանրակրթական դպրոցի կառավարման, ուսումնական տեղեկատվության հետ աշխատելու, դասի կառավարման ուսուցչի գործառույթների և մեթոդների կտրուկ փոփոխության:

Ելնելով վերը արված դիտարկումներից՝ մենք առաձնացրել ենք կրության թվայնացման համատեքստում հանրակրթական դպրոցի կառավարման հետևյալ սկզբունքները, գործառույթներն ու մեթոդները.

Սկզբունքները՝

- արտաքին միջավայրի փոփոխություններին, նորամուծություններին ժամանակին արձագանքումը, ինչը թույլ է տալիս ճկուն դարձնել կառավարման գործընթացը,
- կադրային կազմի ճկուն ընտրությունը,
- բարյացակամ գործընկերային փոխհարաբերությունների հաստատումը,

որը կնպաստի ուսուցիչների մասնագիտական կարողությունների բացահայտմանը և զարգացմանը,

- ուսուցիչների մասնագիտական ինքնության ապահովումը,
- կառավարման սուբյեկտների, աշակերտների և ծնողների արդյունավետ հաղորդակցություն՝ ուղղված կորպորատիվ մշակույթի ձևավորմանը,
- մանկավարժական համակազմի հետ աշխատելու մեթոդների ճիշտ ընտրությունը՝ ուղղված աշխատանքից նրանց բավարարվածության ապահովմանը,
- կադրերի թվային գրագիտության շարունակական կատարելագործման և ինքնակատարելագործման պայմանների և ռեսուրսների ապահովումը:
- ուսումնական նպատակների անհատականացումը:

Գործառույթները՝

- կանխատեսման,
- նախագծման,
- պլանավորման,
- կազմակերպման,
- թվային ուսուցման ղեկավարման,
- փորձագիտական,
- խթանման,
- հաղորդակցման,
- թվային ուսուցման բաղադրիչների ինտերակտիվ փոխանակման ապահովման,
- թվային տեխնոլոգիաների օգնությամբ տեղեկատվության ստացման, պահեստավորման, մշակման և համակարգչային ցանցերի միջոցով փոխանցման,
- մուլտիմեդիա նյութերով աշխատելու մեթոդական և տեխնիկական աջակցության,
- մոդելավորման,
- փոխազդեցությունների և փոխհարաբերությունների կարգավորման,
- կրթական փոխազդեցության (հաղորդակցման) գործիքավորման,
- ռեֆլեքսիայի,
- փաստաթղթերի վերլուծության,
- ինտերակտիվության, նորամուծությունների համապարփակ գնահատման և արդյունքների կիրառման:

Մեթոդները

- կազմակերպչական և վարչական՝ հիմնված ուղղակի հրահանգների վրա(պարտադիր հրահանգ (հրաման, արգելք և այլն), հաշտեցում (խորհրդակցություն, փոխզիջումային լուծում), առաջարկություններ, ցանկություններ (խորհուրդ, պարզաբանում, առաջարկ և այլն):
- նյութական խթանման,
- սոցիալ-հոգեբանական, որոնք օգտագործվում են աշխատողների սոցիալական ակտիվությանը բարձրացման նպատակով,առաջարկություններ, ցանկություններ (խորհուրդ, պարզաբանում, առաջարկ և այլն):
- անձնական օրինակի, հեղինակության, համոզման, առաջարկության, համագործակցության, քննադատության և ինքնաքննադատության:

Եզրակացություն

«Հանրակրթական դպրոցի կառավարման գործընթացի թվայնացման հիմնահարցը մանկավարժական նոր իրողությունների համատեքստում» խորագրով հոդվածի շրջանակներում հանգել ենք մի շարք եզրահանգումների՝

1. տեղեկատվական-թվային տեխնոլոգիաների բուռն ներթափանցումը հասարակական կյանքի բոլոր ոլորտները ինքնին պահանջում են կրթական համակարգի թվային փոխակերպում, որը պետք է կրի համակարգային և ծրագրային բնույթ: Այսօր արդեն ժամանակակից ուսուցման տեխնոլոգիաները՝ այդ թվում նաև թվայինը, դարձել է հանրակրթական դպրոցի բոլոր ենթահամակարգերի կառավարման գործընթացի անբաժանելի մասը՝ ապահովելով են դրանց տեխնոլոգիական առաջընթացը:
2. ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաները՝ այդ թվում նաև թվային տեխնոլոգիան, կրթական գործընթացի կառավարման միջոցներից են, որոնք պետք է օգտագործվեն ուսումնական հաստատությունում կրթության բարձր որակի ապահովման համար:
3. թվային տեխնոլոգիայի աննախադեպ կիրառումը անխուսափելիորեն հանգեցնում են հանրակրթական դպրոցի կառավարման, ուսումնական տեղեկատվության հետ աշխատելու, դասի կառավարման ուսուցչի գործառույթների և մեթոդների կտրուկ փոփոխության:
4. ելնելով մեր ուսումնասիրության արդյունքներից և արված դիտարկումներից՝ կրթության թվայնացման համատեքստում մենք առաձնացրել ենք հանրակրթական դպրոցի կառավարման տեխնոլոգիաները, սկզբունքները, գործառույթներն ու մեթոդները:

Օգտագործված գրականություն

1. ՀՀ օրենքը հանրակրթության մասին, Երևան, 2009:
2. Базаров Т.Ю. Управление персоналом : учебник для студ. учреждений сред. проф. образования / Т.Ю.Базаров. — 8-е изд., стер. — М. : Издательский центр «Академия», 2010. 220 страниц.
3. Баранников А.В. Цифровая педагогика: структура научения в условиях цифровых отношений // Интерактивное образование. 2020. №5-6. С. 2-12.
4. Информатизация образования. – Текст : электронный // Словарь терминов по общей и социальной педагогике. – URL:

https://social_pedagogy.academic.ru/236 (дата обращения: 20.04.2020).
5. Рефлексивное управление школой: Теория и практика. Давыденко Т. М. Белгород, 1995.
6. Роберт, И. В. Развитие понятийного аппарата педагогики: цифровые информационные технологии образования / И. В. Роберт // Педагогическая информатика. – 2019. – № 1. – С. 108-121.
7. Стариченко Б. Е. Цифровизация образования: иллюзии и ожидания.- педагогическое образование в россии. 2020. № 3. С. 50-58.
8. Технология управления образовательным процессом в системе непрерывного образования. А. Н. Рыблова. Изд. центр «Наука», 2009г.

Нарине Матинян

Проблема цифровизации процесса управления общеобразовательной школой в условиях новых педагогических реалий

Заключение

Ключевые слова и выражения: общеобразовательная школа, цифровизация образования, цифровое мышление, управление, технология, информационное поле, образовательный процесс, методы, система, моделирование, обучаемый, оценивание.

В рамках статьи «Вопрос цифровизации процесса управления общеобразовательной школой в контексте новых педагогических реалий» мы пришли к ряду выводов:

1. Стремительное проникновение информационных и цифровых технологий во все сферы общественной жизни само по себе требует цифровой трансформации системы образования, которая должна носить системный и программный характер. Сегодня современные технологии обучения, в том числе цифровые, стали неотъемлемой частью процесса управления всеми подсистемами общеобразовательной школы, обеспечивая их технологический прогресс.
2. Современные педагогические технологии, в том числе цифровые технологии, относятся к числу средств управления образовательным процессом, использование которых в образовательном учреждении на сегодняшний день является важнейшим требованием.

3. Беспрецедентное использование цифровых технологий неизбежно приводит к кардинальным изменениям в управлении общеобразовательной школой, работе с учебной информацией, функциях учителя и методах управления классом.

4. На основании результатов нашего исследования и сделанных наблюдений в контексе цифровизации образования, нами предложены технологии, принципы, функции и методы управления общеобразовательной школой.

Цифровая технология, которая является одним из лучших механизмов эффективной реализации функций управления: применение, планирование, организация, управление, контроль, оценка, рефлексия, с большой эффективностью применается с процессе управления школы.

В целом цифровые технологии используются в процессе управления общеобразовательной школой, работы с образовательной информацией, планирования уроков. Принципы, функции и методы управления общеобразовательной школой, которые претерпевают ощутимые содержательные и функциональные изменения в ходе и в результате цифровизации.

Narine Matinyan

The problem of digitalization of the process of managing a comprehensive school in the context of new pedagogical realities

Conclusion

Key words and expressions: public school, digitization of education, digital thinking, management, technology, information field, educational process, methods, system, modeling, learner, assessment.

Within the framework of the article entitled "The issue of digitization of the public school management process in the context of new pedagogical realities", we have reached a number of conclusions:

1. rapid penetration of information and digital technologies into all spheres of public life itself requires a digital transformation of the educational system, which should have a systemic and programmatic nature. Today, modern learning technologies, including digital ones, have become an integral part of the management process of all subsystems of the public school, ensuring their technological progress.
2. Modern pedagogical technologies, including digital technology, are among the means of educational process management, the use of which in an educational institution is a top requirement today.

3. Unprecedented use of digital technologies inevitably leads to cardinal changes in the management of the general education school, work with educational information, teacher's functions and methods of class management.
4. Based on the results of our study and the observations made, in the context of digitalization of education, we proposed the technologies, principles, functions and methods of general education school management.

Digital technology, which is one of the best mechanisms for the effective implementation of management functions: application, planning, organization, management, control, evaluation, reflection, is used with great efficiency in the school management process.

In general, digital technologies are used in the process of managing a comprehensive school, working with educational information, and planning lessons. Principles, functions and methods of managing a general education school, which are undergoing tangible content and functional changes in the course and as a result of digitalization.

Խմբագրություն է ուղարկվել 28.02.2023թ.
Հանձնարարվել է գրախոսության 12.03.2023թ.
Հրապարակման է հանձնարարվել 28.04.2023թ.